ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023 թ.

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻ
ԼՐԱԳՐՈՂ ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Էլ .հասցե՝ simonyank@rferl.org/

Հարգելի տիկին Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.08.2023թ. հարցման հայտնում եմ, որ 2022թ. Լոռու մարզի Շնող, Սպիտակ, Ստեփանավան համայնքներում աշխատանքային խմբի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերվել են տարաբնույթ խախտումներ, որոնք արտացոլված են աշխատանքային խմբի կողմից լրացված հարցաշարերում: Լրացված հարցաշարերին և արձանագրություններին կարող եք ծանոթանալ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջի «Համայնքներ» բաժնի «Վարչական հսկողություն» ենթաբաժնից:

Հայտնաբերված խախտումների վերացման նպատակով լրացված հարցաշարերը ուղարկվում են համայնքների ղեկավարներին և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

Համայնքների կողմից միջոցներ են ձեռնարկվում նշված թերությունների վերացման ուղղությամբ և ներկայացված տեղեկատվությունը մեր կողմից կից գրությամբ ուղարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին: Նախարարության կողմից թերությունների վերացման գործընթացը վերահսկվում է անընդմեջ պարբերականությամբ՝ մինչև արձանագրված բոլոր թերությունների վերացումը:

Որևէ խախտման հետ կապված իրավապահ մարմիններին դիմելու դեպքեր չեն եղել:

Հարգանքով՝

17/08/23

X _____
ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատ. Ա.Սահակյան
Հեռ. /0322/ 4-31-99